— Ես զզւում եմ այդ մարդիկներից. եթէ գիտենայի, որ բողոքականներ են, ես բնաւ նրանց շեմքի վրայ ոտք չէի դնի: Չէ կարելի նրանց հանդիպել, առանց կրօնական վիճաբանութիւններ լսելու:

Նա գլուխը դրեց իր թեւքի վրայ եւ լռեց:

Ես հաւատացած էի, որ նա հանգստանալ չէր կարող, ես հաւատացած էի, որ նրան երկար պիտի տանջէր այն միտքը, որ եղբայրը զլանում է իր հարազատին եղբայր կոչել:

Ես վերադարձայ սրահը. վիճաբանութիւնը դեռ շարունակւում էր. ես երբեք չէի տեսել Ջալլադին այնպէս տաքացած:

Մէկը մեզ մօտ հասիրի վրայ պառկած խռմփում էր: Վիճաբանութեան ձայնից զարթնեց, գլուխը վեր բարձրացրեց եւ քնաթաթախ նայեց մեզ վրայ:

— Պօղոս եղբայր, զարթնեցի՞ր, — կարեկցութեամբ հարցրեց նրանից Թաթոս եղբայրը:

Պօղոս եղբայրը, փոխանակ պատասխանելու, սկսեց յօրանջել, աչքերը ճմբռել, որ լաւ տեսնէ, թէ մենք ինչ մարդիկ ենք: Նա նոյնպէս մեզ նման ճանապարհից էր եկած եւ յոգնած պառկել էր: Մինչեւ նա կը վերկենար, կը լոացուէր, որ քունը փախցնէ, նրա բացակայութեան ժամանակ Թաթոս եղբայրը ծանօթացրեց մեզ նրա անձնաւորութեան հետ, թէ նա Բաղէշից է եկած, այնտեղի եղբայրներից է, ձմեռը տեղային դպրոցներում վարժապետութիւն է անում, իսկ ամառը շրջում է գիւղերում, քարոզ է տալիս, մխիթարում է եղբայրներին տիրոջ խօսքերով եւ այլն:

— Նա ընկլիզի լեզու էլ է իմանում, — աւելացրեց սուրբ գրքերի տարածողը:

— Ուրեմն միսիոնարների աշակերտ կը լինի, — նկատեց Ջալլադը:

— Նա նրանց մօտ է սովորել եւ նրանցից այժմ լաւ ռոճիկ է ստանում:

— Որքա՞ն:

— Ամսական երկու ոսկի:

— Այ՞դ է «լաւ ռոճիկը»:

Պօղոս եղբայրը մի գնդաձեւ մարդ էր, մի աչքից կոյր, որ ծածկելու համար մուգ-ծխագոյն ակնոցներ էր գործածում: Նրա մարմնի բոլոր անդամները միատեսակ կոլորուած էին, կարծես թէ ծայրեր չկային: Մեր հիւրընկալի կինը, աղջիկը մի առանձին հոգ տարան նրա լոացուելու եւ երեսը սրբելու մասին, որը վերջացնելուց յետոյ եկաւ նստեց մեզ մօտ:

— Հրամանքնիդ որտեղացի՞ էք, — եղաւ նրա առաջին խօսքը: